դնդերը լարուել են, գլուխս ծանր է։

Շուտ վերադառնում եմ տուն։

* * *

Ամէն օր նոր յիշատակներ են արթնանում իմ մէջ։

Մեր կորուստը այնքա՛ն շատ է, որ դրել անկարելի է։ Մոռանալու մեծ ցանկութիւն ունինք ամէնքս։ Երէկը՝ արիւն է եւ բոց, այսօրը՝ անորոշ է եւ վաղը՝ անյայտ։

Նրանք, որ վերադարձել են, լռում են։ Լռում են, որպէսզի կարողանան ապրել։ Բայց նրանց դէմքի վրայ դժոխքի կնիքը կայ։ Խօսում են՝ անձայն, ծիծաղում են առանց ուրախութեան, շարժւում են մեքենաբար։

Փողոցում, կորացած մարդու քայլուածքից, բազուկների որոշ շարժումից կարելի է նրա կրած դժբախտութիւնների որակը հասկանալ։ Դէմքի ինչ ինչ գծեր, աչքերի անորոշ փայլը, մաքի կանգ առնելը խօսքի առջեւ, խոր վշտի, անբուժելի վէրքերի բնորոշ արտայայտութիւններ են։

Մենք վարժ էինք նախնական հոգեբանութեան գրքի մէջ կարդալ։

Այժմ, այլեւս ոչ մի բան չի հասկացւում։ Փոխուած է ամբողջ մի ժողովրդի արտայայտութիւնը։ Երբ բաց ծովը ալեկոծուած է, ափից ոչինչ չի նշմարւում։ Սոսկալին այն է, որ ամէն մարդ ծածկում է, ուզում է մոռանալ, ապրել այնպէս, ինչպէս պիտի ապրէր, եթէ եղեռնը տեղի ունեցած չլինէր։

Ու մինչեւ անգամ ուզում են ուրախ ապրել։

Ցիշում եմ 1904–ին Բաղում։ Երեք օր փակուած մնացել էի թրքաց թաղում, անպաշտպան ընտանիքների մօտ։ Դուրսը կրակում էին, խփում, թալանում։ Բանի՛ անգամ խուժանը փորձեց ներս մտնել եւ շնորհիւ դռանցի թուրք դռնապանին ազատուեցանք։ Երբ երրորդ օրը, անքուն դիշերներից յետոյ յայտարարեցին, որ կռիւը վերջացել է, ես խենդ ուրախութեամբ, փողոցում ընկած դիակների վրայից ցատկելով, վազեցի դէպի կենտրոնը։ Մի քիչ չանցած, առջեւս եկան մի խումբ մարդիկ՝ զուռնա, զաւալ նուագելով։ Նրանք անցան երկու երեք փողոց, չուարած կանգ առին, գործիքները թաքցրին եւ, գլուխները ծռած, լռիկ եւ խիստ, վերադարձան։

Նոր կսկիծը եւ վախը նորից մեզ առաւ իր անդունդը։

Այդպէս է ե՛ւ այսօր։

Նրանք, որ այլեւս չկան, եթէ ապրէին՝ պիտի նոյնը անէին։ Ոգեւորութեան, ապրելու տենչի, նոր առիթներ պիտի ստեղծէին։

Եւ համաշխարհային պատերազմը տկլորուեց, յոյսերը մեր մէջ, վայրի մեղուների պէս, անհանգիստ փեթակներ դրին։

Խեղճ Շահրիկեանը զարմանքով եւ մի քիչ էլ ցաւով դիտում էր, «Ազատամարտ»ի խմբագրատան սեղանի վրայ նստած Վարուժանին, որ «Կեցցէ՛ պատերազմ» էր պոռում։

Գեղամ Բարսեղեանը վերջին հեռագիրներն էր թարգմանում եւ բարձրաձայն մեզ հաղորդում։

Սիմանթօն ապագայի ծրագիրներ էր մշակում։

Արման Դօրեանը, նուրբ եւ զգայուն բանաստեղծ, ֆրանսական գրականութիւնը թողել եւ վերջին պահուն եկել էր մեր «մեհենական» շարժման միանալու։

Ես էլ «Մեհեանիս» ճակատից ամենին «ասպարէզ» էի կարդում...

Ոգեւորումից ոգեւորում, անդնդից անդունդ, ապրում ենք մի տեսակ թաւալուելով։ Կրակը պարում է մեր շուրջը, ծովերը հառաչում են։

Գնացին ամէնքն էլ, մեռան. ինչպէ՞ս մեռան՝ ոչ ոք չի իմանում։ Եւ սակայն, ամէնքս էլ իմանում ենք, որովհետեւ ամէն բան մեր սրտերի մէջ տեղի ունեցաւ։

Սոսկում եմ, երբ մտածում եմ, ով ինչպէս մեռաւ։ Ինչպէ՞ս մեռաւ Սիմանթօն. նա այնքա՛ն վախում էր մահից եւ այնքա՛ն սիրում էր կեանքը։

Վարուժանը, Արտաշէս Յարութիւնեանը, Գեղամ Բարսեղեանը...

Գեղա՛մ Բարսեղեանը։

Կան նրանից աւելի մեծերը, աւելի տաղանդաւորները, մինչեւ իսկ յիշատակի մէջ աւելի բախտաւորները, բայց չկայ մէկը իմ սրտիս այնքա՛ն մօտ, ինչքան նա։

Մելամաղձոտ մի Պեր Գիւնտ, որի մէջ ուժգնօրէն մեղեդիացած էր պատրանքների արկածախնդրութիւնը։ Ծովերից այն կողմ,

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան